424

1. Հաճախ ես ընկնում եմ, բայց գիտեմ՝ սիրում ես
Քո զավակներին հավերժական սիրով
Եվ նոր ուժեր ես պարգևում ներելով՝
«Կանգնի՛ր,- ինձ ասում ես,- քայլիր հավատքով»:

Էմմանուել, (3)
Փրկություն և կյանք ես ինձ պարգևել:
Էմմանուել, (3)
Գողգոթայի զոհով երկինքն ես բացել:

2. Եվ Դու ես իմ Հայրը, արևն աշխարհի,
Քո շողերով է երկիրը տաքանում,
Դու՝ զոհ Գողգոթայի, բերիր փրկություն,
Հիսո՛ւս, իմ Փրկիչն ես և հույսը կյանքիս:

3. Եվ Դու ես Աստվածը փառքի, զորության,
Եվ Դու ես իմ երգը ուրախության,
Քո մեջ է հանգիստը հավիտենական,
Քեզ հետ է հաղթությունը, ալելուիա:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025